



ԵՐԵՎԱՆԻ ԿԵՆՂԱՆԱՔԱՆԱԿԱՆ ԱՅՔԻ

Հունիսի 1-ին, Երեխաների պաշտպանության միջազգային օրը, Երևանի կենդանաբանական այգին այցելուների համար մի շարք անակնկալներ մատուցեց



Տոնական միջոցառումների մեկնարկը տրվեց առավոտյան ժամը 10:00-ին: Այգու փոքրիկ այցելուներին դիմավորեցին ծաղրածուները, հեքիաթի հերոսներ, եղան թատերական ներկայացումներ, համերգային ընդարձակ ծրագիր՝ երաժշտական տարբեր խմբերի, մանկական համույթների մասնակցությամբ, բացի այդ անցկացվեցին խաղ-մրցույթներ:

Կենդանաբանական այգու խաղային և «Հու» ամսագրի տաղավարներից բացի, այգու տարածքում տեղադրված էին նաև Երևանի կենդանաբանական այգու գործընկեր կառույցների տաղավարները՝ «Նարնջագույն փղիկ», «Բուկինիստ», «Տնակ» երեխաների զարգացման կենտրոն: Բոլոր տաղավարներում երեխաների համար կազմակերպվում էին ինտելեկտուալ և զվարճալի խաղեր:



«Հու» ամսագրի տաղավարում այցելուները, և հատկապես փոքրիկները հնարավորություն ունեցան ծանոթանալու ոչ միայն մանկական ամսագրի հրապարակումներին, այլև կենդանիների խնամակալության ծրագրին, այգու այլ նորություններին: Այցելուները հնարավորություն ունեցան հետևելու կենդանիների ցուցադրական կերակրումներին ևս:

Կենդանաբանական այգու խաղային տաղավարում երկու մասնակից արժանացան գլխավոր մրցանակի՝ հեծանիվի, և 8 տարեկան Նարեկ Սուքիասյանը և 13 ամյա Հարություն Գուլգուլյանը, իսկ 15 տարեկա Մարիամ Կարապետյանն արժանացավ Կենդանաբանական այգու խորհրդանշանով շապիկին և զվարճիկին:

Կենդանաբանական այգի էր այցելել նաև Երևանի քաղաքապետի տեղակալ Արամ Սուքիասյանը: Երևանի կենդանաբանական այգու տնօրեն Ռուբեն Խաչատրյանի ուղեկցությամբ քաղաքապետի տեղակալը շրջեց այգում, ծանոթացավ տարեկան ծրագրով իրականացվող աշխատանքների ընթացքին:

Տոնական միջոցառումները նախատեսված էին մինչև ժամը 18:00-ն, սակայն այցելուներն այնքան շատ էին, որ մինչև երեկո դեռ չէին ցանկանում լքել այգին: Հիշեցնենք, որ հունիսի 1-ին Երևանի կենդանաբանական այգու մուտքը մինչև 16 տարեկանների համար՝ անվճար էր:

Ամառային ճամբար՝ Երևանի կենդանաբանական այգում



Երևանի կենդանաբանական այգին, «ԼՈՒԴՈՆ ԱՅ» միջազգային ուսումնական կենտրոնի հետ համատեղ հետաքրքիր անակնկալ էր պատրաստել իր փոքրիկ այցելուների համար: Հունիս ամսին իրականացվեց ամառային ճամբար՝ Երևանի կենդանաբանական այգում:

Ճամբարը հնարավորություն տվեց մասնակիցներին անզլերենի դասընթացները համատեղել կենդանիների ուսումնասիրման, կերակրման, հետաքրքիր ուսուցողական խաղերի հետ: Անզլերենի դասերն անցկացրեցին «ԼՈՒԴՈՆ ԱՅ» միջազգային ուսումնական կենտրոնի փորձառու մասնագետները: Երևանի կենդանաբանական այգու կողմից էլ ճամբարականների համար հատուկ շրջայցեր կազմակերպվեցին:



Ճամբարը նախատեսված էր երկու տարիքային խմբերի՝ 6-9 և 10-13 տարեկան երեխաների համար:

Օգոստոսի 6. կատվային լեմուրների բնակարանամուտը



5 կատվային լեմուրները (Lemur catta) Երևանի կենդանաբանական այգի են բերվել Երևանի և Երուսաղեմի կենդանաբանական այգիների միջև կնքված համագործակցության հուշագրի շրջանակում:

Լեմուրներն, իրենց կենսապայմանների առանձնահատկություններին համապատասխան, կապրեն կենդանաբանական այգու ջրավազաններից մեկի կղզակում:

Կատվային լեմուրները գրանցված են Բնության պահպանության միջազգային միության կարմիր ցուցակում՝ «վտանգված» կարգավիճակով: Վերջիններին՝ երկրից երկիր տեղափոխումը կարգավորվում է «Անհետացման եզրին գտնվող վայրի կենդանական ու բուսական աշխարհի տեսակների միջազգային առևտրի մասին» միջազգային կոնվենցիայով, որին Հայաստանը միացել է 2009 թվականից: Կոնվենցիայի հավելվածներում ներառված կենդանիների ներկրումն ու արտահանումը կազմակերպվում է բացառապես CITES թույլտվություններով:

2011թ.-ից Երևանի կենդանաբանական այգին համագործակցում է աշխարհի մի շարք կենդանաբանական այգիների և կենդանատեսակների պահպանությամբ զբաղվող կառույցների հետ՝ իրականացնելու իր հիմնական առաքելություններից մեկը՝ անհետացման եզրին գտնվող կենդանատեսակների պահպանությունը:



Հունիսի 5-ին նշվեց «Շրջակա միջավայրի պաշտպանության» համաշխարհային օրը



1972 թ.-ին Միավորված ազգերի կազմակերպության գլխավոր ասամբլեան հռչակեց հունիսի 5-ը՝ որպես Շրջակա միջավայրի պաշտպանության համաշխարհային օր: Միլիոնավոր մարդիկ ամբողջ աշխարհում սկսեցին նշել այդ օրը՝ համախմբվելով տարբեր բնապահպանական միջոցառումների շուրջ:

Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամը տոնեց այդ օրը՝ կազմակերպելով բնապահպանական ցուցահանդես Երևանի կենդանաբանական այգում: Միջոցառումը տեղի ունեցավ «Երևանյան ամառ 2014» Երևանի քաղաքապետարանի եռամսյա միջոցառումների ծրագրի շրջանակում:

Հունիսի 5-ին Երևանի կենդանաբանական այգում բնապահպանական ցուցահանդեսում ներկայացված էին մի շարք պետական կառույցների և կազմակերպությունների՝ բնապահպանությանն առնչվող գործունեությունը: Տաղավարները և անհրաժեշտ պարագաները բոլոր մասնակիցներին տրամադրվել էին անվճար. ավելին՝ ՎիվաՍել-ՄՍՍ-ի աջակցությամբ այգու մուտքը ժամը 9:30-ից մինչև 17:00 անվճար էր: Երևանի կենդանաբանական այգու տնօրեն և FPWC-ի հիմնադիր Ռուբեն Խաչատրյանն իր ողջույնի խոսքում նշեց. «Որպես հասարակական տարածք՝ Երևանի կենդանաբանական այգու նպատակն է ծառայել բոլոր հայերին և հնարավոր բոլոր մակարդակներում տեղեկացնել նրանց շրջակա միջավայրի և բնության պահպանության կարևորության մասին»:



Ավելի քան 15 մասնակիցներ բնապահպանական ապրանքների գունագեղ բազմազանություն էին ներկայացրել՝ արևային ջեռուցման տեխնիկական լուծումներից մինչև վերամշակում, ջրի արտադրություն, էկոտուրիզմ և սպորտ: Լավագույն տաղավարները մրցանակների արժանացան Բնապահպանության նախարարության և Երևանի քաղաքապետարանի կողմից:

Իսկ բնությանը նվիրված մանկական արվեստի ցուցահանդեսը հատուկ մթնոլորտ և տրամադրություն պարզեց օրվան:

Ցուցահանդեսի գրանցած հաջողությունը հստակ ազդակ էր, որ այն պետք է կրի ամենամյա շարունակական բնույթ: FPWC-ն սիրով պատրաստ է ստանձնել այդ պարտականությունը՝ կազմակերպելու «Շրջակա միջավայրի պաշտպանության» համաշխարհային օրվան նվիրված հաջորդ ցուցահանդեսը 2015 թ.-ին:

Սեպտեմբերի 14-ին Երևանի կենդանաբանական այգում տեղի ունեցավ «Պաղպաղակի օր» սպասված միջոցառումը



Ամռան նախավերջին օրը Երևանի քաղաքապետարանի «Երևանյան ամառ» ծրագրի շրջանակում Երևանի կենդանաբանական այգու և Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի համատեղ նախաձեռնությամբ իրականացվեց ամենամյա «Պաղպաղակի օրը»:

Երեխաների սիրելի քաղցրավենիքը տրամադրել էր Հայաստանի բարձրորակ կաթնամթերք արտադրող առաջատար ընկերություններից՝ Աշտարակ Կաթ ՓԲԸ: Պաղպաղակը ողջ օրվա ընթացքում վաճառվում էր խորհրդանշական 50 դրամով: Ընդհանուրով բազմաթիվ այցելուների խնդրանքներին, սեպտեմբերի 14-ին՝ ժամը 12:00-17:00 Երևանի կենդանաբանական այգին ու Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամն այս տարի երկրորդ անգամ իրականացրեց «Պաղպաղակի օր» միջոցառումը:



Պաղպաղակի վաճառքից ստացված ողջ հասույթն ուղղվեց Երևանի կենդանաբանական այգու կենդանիների պայմանների բարելավմանը:

Մուտքը մինչև 16 տարեկանների համար անվճար էր: Նախատեսված էին խաղեր, մրցույթներ, հեծանիվի խաղարկություն:

Գրանդ կրտսերը հարմարվել է իր նոր միջավայրին



Երիտասարդ և չարաճճի Գրանդ կրտսերը, ով հուլիսի 12-ին Թբիլիսիից ժամանել էր Երևանի կենդանաբանական այգի, միանգամից գրավեց բոլոր այցելուների սրտերը: Կրտսեր Գրանդը փոխարինել էր ավագ Գրանդին, ով այժմ բնակվում է Թբիլիսիի կենդանաբանական այգում իր կնոջ՝ Մավկայի հետ:

Այգու նոր բնակիչը յոթ տարեկան, եռանդով լի դեռահաս է: Այցելուները հաճույթով են հետևում, թե ինչպես է նա շրջում իր նոր ազատավանդակում՝ ամեն անգամ նոր զբաղմունք գտնելով: Կրտսեր Գրանդին հետևելը միշտ զվարճալի է. երբ նա ծառի կոճղերն այս ու այն կողմ է նետում, խաղում է ավագով, ձյուղերով ու զննակով, շոգից պատսպարվում է սիրելի լողավազանում:

Գերմանացի փորձագետ Թորիաս Դորնբուլը, ով դասընթացներ էր անցկացրել և՛ ավագ, և՛ կրտսեր Գրանդի հետ՝ օգնելով նրանց արագ հարմարվել նոր միջավայրին, շատ ուրախ է, որ երիտասարդ փղին այդքան հեշտությամբ ու առանց խնդիրների հաջողվեց ընտանյալ Երևանին: Սակայն ի տարբերություն հասուն և ավելի հանգիստ բնավորությամբ ավագ Գրանդի՝ կրտսերն ավելի մեծ դժվարություններ է ստեղծում իր խնամողների համար:

Այնուամենայնիվ, համոզված կարելի է ասել, որ կրտսեր Գրանդը կմնա նույն զվարճալի փղիկը, ով իր հմայքով կգրավի նորանոր այցելուներին: